

Ռոբերտ Կամոյանը 75 տարեկան է

Սյունյաց երկիր

31 ՆՈՒՄԲԵՐ 2011թ. • № 22 (243)

ՏՄԱԳՐՎՈՒՄ Է 2003/06

ՊՈՒՆՏՈՒ ԵՎ ԳՐԱՍՏՎԱԿ «ՍՅՈՒՆՅԱԿ ԵՐԿՐԻ» ԱՐԽԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ
 ԳՐԱՅԵՐ՝ ք. ԿՄԻՍՆ, ՇԱՊՈՒՅՆԱՆ 2032
 ԳԵՆՍԻՍՏՐՈՒՄ (0285) 5 25 63 (091) 45 90 47 (077) 06 28 02
 Էլ. հասցե՝ www.syunicyerker.am
 Էլ. փոստ՝ syuniacyerker@mail.ru



ՇՆՈՒՆԳԻ ԶՆՈՐՅԱԿՈՐ

Հայ արդի կերպարվեստում իր տեղը վաղուց գտած, անհատական ոճ ու ձեռագիր մշակած նկարիչը՝ առայսօր չզնահատված ու հանրությանը ըստ պատշաճի չներկայացված, չնկատվեց նաև ծննդյան 75-ամյակի կապակցությամբ, որը լրացավ հունվարի 6-ին: Բայց դա փոքր-ինչ անգամ չնսեմացրեց եւ չէր կարող նսեմացնել Ռոբերտ Կամոյանի արվեստը:

Նրա ստեղծագործական ուղին, ստեղծագործությունների բնութագիրը մի քանի հրապարակումների մեջ այսօր փորձում են ներկայացնել ինչ գործընկերները, ուստի եմ ինչքան գերբնական կամայական արվեստը բնագրելուց: Բայց կուզենայի շնորհակալություն հայտնել նրան՝ հայ կերպարվեստում ունեցած համեստ ներդրման, ինչպես եւ «Սյունյաց երկիր» հետ համագործակցության համար: Մեր համագործակցության արդյունքում վերջին տարիներին ծնվեցին Ակսել Բակունցի, Խաչատուր Աբովյանի, Սուրբ Գրիգոր Տաթևացու, Համո Սահյանի, Նիկողայոս Աղոնցի

դիմանկարները: Ծնվեցին «Չագեծոր բերդի հիմնադրումը Չագ նահապետի կողմից», «Վահանավանքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու նավակատիքը 911թ.» մեծադիր կտավները (վերջինս հանրությանը կներկայացվի Վահանավանքին նվիրված թերթային հատուկ համարում): Ստեղծվեց «Ագարակ քաղաքը» խիստ ուշագրավ կտավը: Մեկ այլ մեծադիր կտավ էլ մոտ ապագայում կարտագույլի Մեսրոպ Մաշտոցի՝ Սյունիքի քաղաքական ու հոգեւոր կենտրոն՝ Շաղատ կատարած այցը եւ նրա հանդիպումը Հայաստանի ու Վրաստանի մարզպան, բոլոր ժամանակների ամենանշանավոր սյունեցիներից մեկի՝ քաջ սիսական Վասակի հետ:

...Առհասարակ միշտ էլ զգուշությամբ եմ մտել կերպարվեստի աշխարհի եւ որեւէ գեղանկարչի ստեղծագործություններին՝ գնահատական տալու հավակնություն չեմ ունեցել՝ մտածելով, որ դա, նախեւառաջ, արվեստաբանների գործն է: Սակայն պատմական, գրական դեմքերի կերպավորման, պատմական իրողությունների գեղարվեստական արտացոլման ընթացքում Ռոբերտ Կամոյանի մի յուրահատուկ մոտեցումը նկատեցի: Վրժիքը վերցնելուց առաջ, զուտ գեղարվեստական խնդիր լուծելուց առաջ խորությամբ ուսումնասիրում է պատմական տվյալ ժամանակաշրջանը՝ քաղաքական իրավիճակից մինչեւ սիմվոլներ, մինչեւ տարագ ու կենցաղային մանրամասներ, իսկ պորտրետային աշխատանքներ սկսելուց առաջ՝ տվյալ անձնավորության կյանքն ու ստեղծագործությունը: Եվ մինչեւ գեղարվեստական կերպարանք ստանալը տվյալ ստեղծագործությունն արդեն ունենում է իր գաղափարական բովանդակությունն ու հենքը: Միայն դրանից հետո ենք առնչվում նրա վարպետությանը, գեղարվեստական բարձր ճաշակին, ձեւի եւ բովանդակության ներդաշնակությանը: Պատմական թեմաներով այդ ստեղծագործությունները, որ կոմպոզիցիոն դասավորվածություն ունեն, մեր ժողովրդի անցած ժամանակաշրջանի կոնկրետ դրվագների լավագույն վերամարմնավորումն են: Որքանով տեղյակ եմ, Ռոբերտ Կամոյանը ստեղծագործում է նկարչության մի քանի ժանրերում: Բայց նշված գործերում միանգամից համադրված են մի քանի ժանրեր՝ բնանկար, դիմանկար...

Չի կարելի չնկատել նրա ուրույն գիծը, ուղղակի ազդեցություններից գերծ պահվածքը, հայրենի

Շարունակությունը՝ էջ 8

ՌՈՒԲԵՐՏ ԿԱՄՈՅԱՆ. «Եթե մեկին նմանվեի, չէի զբաղվի գեղանկարչությամբ»

Հունվարի 6-ին գեղանկարիչ եւ ճանաչված մրավորական Ռոբերտ Կամոյանը դարձավ 75 տարեկան: Առաջացած փորձում էլ արվեստագետը շարունակում է ստեղծագործել: Նրա արվեստում նկարակալի վրա նոր գեղանկար է արարվում, իսկ քիչ այն կողմ Վահանավանքի նավակատիքը պարզեցրող մեծադիր կրավն է, որի լուսանկարային փորձերակը պիտի փայտազրվի մեր թերթի՝ Վահանավանքի 1100-ամյակին նվիրված հատուկ թողարկման շապիկին: Ի դեպ, գեղանկարիչը մի քանի փարի է, ինչ համագործակցում է «Սյունյաց երկիր» թերթի հետ, հատուկ թողարկումների համար վրձնել

է Խաչատուր Աբովյանի, Ակսել Բակունցի, Նիկողայոս Աղոնցի, Ռաֆայել Մինասյանի դիմանկարները:

Ռոբերտ Կամոյանը նաև հետաքրքիր կյանք ապրած անձնավորություն է, հեռավոր ճամփորդությունների է մեկնել՝ երբեմն արկածներով լի, հանքում ֆիզիկական ծանր աշխատանք է կատարել՝ ընտանիքի հոգսը թեթևացնելու նպատակով: Բայց ամեն ինչից զատ՝ նա ճշմարիտ արվեստագետ է, սովորել է Լենինգրադի գեղարվեստի ակադեմիայում, ավարտել Երեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտի գեղանկարչության եւ ռեժիսուրայի ֆակուլտետները: Տարբեր



թատրոններում (Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետաթատրոնում 1968-ից մինչեւ 1998 թվականը) աշխատել է որպես բեմադրող-ռեժիսոր եւ նկարիչ-ծեւավորող: Բեմական ծեւավորումներ է արել նաև Գյումրու եւ Գորիսի թատրոններում: 1964-ից մասնակցել է հանրապետական եւ համամիութենական ցուցահանդեսների: Նրա ստեղծագործությունները գտնվում են Հայաստանի, ԱՄՆ-ի, Կանադայի, Ռուսաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի թանգարաններում եւ մասնավոր հավաքածուներում:

2006-ին Երեւանում հրատարակվել է Ռ.Կամոյանի գեղանկարների ալբոմը, որում մասնավորապես, նա փորձել է տալ արվեստագետի էության մասին իր պատկերացումը: «Արվեստագետները զալիս են ու անց կենում: Փորփրենք նրանց անցյալ կյանքը, հուսահատության կամ մարդատյացության, խարդախության կամ ինքնազոհության եւ ոչ մի հիմք: Այս մեծագույն միտիկները միշտ էլ հավասարակշռված են, եւ ոչինչ չի կարող սասանել նրանց հավատն առ գեղեցիկն ու գոյության անվերջությունը»:

Կամոյան արվեստագետի ստեղծագործական աշխարհին փոքր-ինչ ծանոթանալու համար պարզապես Շարունակությունը՝ էջ 9

ՀՈՒՐԵՐԱ

համար: Կարող է հետս գերեզման տանեն:

Այսինչ նկարիչն այսինչի ազդեցությունն է կրել

Ես ոչ մեկից ազդեցություն չեմ կրել: Եթե մեկին նմանվեի, չէի զբաղվի այս գործով: Ես նույնիսկ նկարիչների միության անդամ չեմ եղել: Այդ պատճառով խորհրդային Միության օրոք ատելություն կար իմ հանդեպ: Ես ոչ մեկին չէի ընդունում: Ասում էին՝ մեզ նման նկարի, ես էլ կտրուկ պատասխան էի տալիս՝ ոչ մի դեպքում, այդ թվում նկարիչների միության նախագահին: Իմ ազդեցություն կրելն ուրիշ է եղել: Համաշխարհային գրականությունը գիտեմ, երաժշտությունը՝ նույնպես, երկու տարի հատկապես փիլիսոփայություն եմ ուսումնասիրել, ճարտարապետություն, մյուս արվեստները: Ձեր ազդեցություն ասածն այս ամենի խտացումն է: Բայց ոչ այն, որ սկսեմ որեւէ մեկին ընդօրինակել: Ոչ մի դեպքում:

Ապագա ունի՞ հայ գեղանկարչությունը

Հայ գեղանկարչությունն ապագա կունենա, եթե չընկնի դոգմայի մեջ: Ես ուզում եմ մանրանկարչության ավանդույթները շարունակել, բայց ոչ թե դոգմայի մեջ ընկնել, այլ ազատ նկարել: Ոնց որ Սարգիս Պիծակը, ով այսօր էլ ապրում է: Ես նաեւ հակում ունեմ որմնանկարչության հանդեպ: Որմնանկարներ եմ արել Գեղանուշի Սբ Հռիփսիմե եկեղեցում, ընդ որում ամբողջությամբ, էջմիածնում, Ռուսաստանի բազմաթիվ եկեղեցիներում: Նկարիչների մի բրիգադ էի ղեկավարում՝ 18 հոգի: Մոտ մեկ տարի Սուզդալում ռեստավրացիա եմ արել բրիգադի հետ: Կողքից ոչ մեկին չէի լսում, ես իմ սկզբունքներն ունեմ: Ուրիշներն ինձ փառաբանում էին, հանճար ես, ես ես, էն ես: Բայց դա ինձ համար նշանակություն չունի: Վերադարձա եմ այլեւս ոչ մի ցանկություն չունեի դուրս գալու Կապանից: Գնամ Փարիզ կամ Լոնդոն՝ ի՞նչ անեմ: Ավելի լավ է՝ այստեղ նկար նկարեմ: Ուրախ եմ, որ Աստված այդ ծիրքն ինձ պարգևել է, իսկ իմ գործերը հաջողվել են, թե ոչ, իմ մահից հետո կերեւա, թե ինչ եմ թողել: Հիմա դա ոչ մեկը չի կարող որոշել:

Ի՞նչ զգացողություններ է ունենում նկարակալի առջև

Նկարիչը նկարակալի առջև որ կանգնում է, ոնց որ անդունդի առջև կանգնած լինի: Ի՞նչ պիտի անի, շարունակի՞ նկարել, թե՞ պղծ ծալի, հետ գնա: Սա ամենահեշտն է: Բայց թե տղա ես, թե առ, թռիկ անդունդի վրայով ես մի բան ստեղծիր: Ես ինչ արել եմ, ողջ կյանքս, կարողություններս, ամենակարեւորը՝ ժամանակը հատկացրել եմ նկարելուն: Մինչեւ գիշեր նկարել եմ, ապագայի համար եմ ստեղծել: Անցյալ դարի, նախանցյալ դարի նկարիչներն ո՞ւմ համար էին ստեղծում, իրենց կնկա՞, երեխայի՞ համար կամ փո՞ղի էին ստանում իրենց ստեղծածի դիմաց: Ամենեկին: Նրանք մի նպատակ ունեին, մի գեղեցիկ գործ ստեղծել եւ փոխանցել սերունդներին: Դիցուք հայ մանրանկարչությունը: Այդ ինչ համբերություն է ունեցել այդ մարդը, ով այդքան ժամանակ նստել է մոմի տակ եւ նկարել: Այդ ի՞նչ մարդիկ են եղել, ես ձգտում եմ նմանվել մեր մանրանկարիչներին:

Անհատական ցուցահանդեսների լայն աշխարհագրություն

Իմ նկարները հիմնականում մասնավոր հավաքածուներում են: Անցել եմ խՍՀՄ մեծ ու փոքր քաղաքներով, Սվերդլովսկում, Նովոսիբիրսկում մեծ ցուցահանդես եմ բացել, նույնը Վլադիվոստոկում, այս վերջին ցուցա-



Իմ պարունակից, 2011թ., գուաչ, կրավ:

Ինքը, իր աշխարհը, մենք



ՎԱՅԵ ԵՓՐԵՍՅԱՆ

Ռոբերտ Կամոյանը մենության անթերի մարմնավորումն է: Մեծությունը ճշմարիտ գիտակցված ներվիճակ է, որովհետեւ իմաստավոր արվեստագետը հեռու պիտի լինի ամբողջիկ պատկանող կալվածքներից, սրանց մեջ ըլքթթաջող գրգռներից, իբր փայտակող գաղափարախոսություններից, իբր ապրելու սկզբունքներից: Ռոբերտ Կամոյանի նկարը երբեք «ջուր չի խմել» կասկածելի աղբյուրներից, իր արժեքարժեք, իր ակունքը եւ տեւելու իր ժամանակը ինքն է որոշում:

Ռ.Կամոյանի արվեստը, ուրեմն, միայնակ է ու բարձր, միայնակ է ու խորհրդավոր, միայնակ է ու անհասանելի: Ինքն այլ գիծ ու պատկեր է նկատում, իր տեսածն ու վերապարածը այլ աշխարհ է, իր հայացքը հասնում է այլ եզրեր: Քաղաքակրթական կամ պատմական բնականորեն օտար է իր արվեստին, ինքը աշխարհակարգի ու տիեզերակարգի ուղղությունն է ներկա: Այս հիմքով էլ Ռ.Կամոյանի գիծն ու գույնը չեն ավարտվում կտավի կամ թղթի սահմաններում, նրանք շարունակվում են ու հասնում աշխարհ-կտավին կամ տիեզերք-կտավին:

Մեծության արվեստը չի կարող հետեւորդներ ունենալ: Սակայն տարօրինակ իրակարգ է ձեւավորվել: Ռ.Կամոյանին առնչվողներն անմիջապես նրան անվանում են Ուսուցիչ: Չեն հետեւում, այդուամենայնիվ չեն կարող ժխտել եւ նրա, եւ նրա արվեստի արտասովոր իմաստությունը: Փոքր-ինչ ձեւափոխելով հայտնի ասույթը՝ գրառեմ այս մեծող քաղաքի պատերին. «Մեր ապրելը Ռ.Կամոյանի ներկայությամբ խնդրահարույց է, առանց նրա՝ անհետաքրքիր»...

Օվսաննա ոսկեծղի այր Կամոյանին



ՌՈՒԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՅԻ

Կովսալեռ - Խուսրուվի սպորտում վրձնահարվածները երեւակում են առիւնը - անզուգական պարկերներ, ծաղկող Ռոբերտ Կամոյանը փարերքի մեջ հորեղար է...

Սյունեցիների պատմության հիշատակման շրջանը մեր եւ արտերկրի շատ գիտուններ համարել — հիմնավորել են բրոնզի դարը: Դարերի հողովայնում պաշտամունքների երկրամաս Սյունիքն ավանդել է Հայկազարմ Սիսակ նահապետի ու նրա ժառանգների ասքերը: Բարդուղիմեոս Առաքյալի, Սբ Մեսրոպի սյունիքյան այցելությունները պատմվում են սերնդեսերունդ... Քափ ու քրտինք

Կտրած՝ պատմաբանները համարում են սյունյաց պատմության գրադարանը, որը լուսաողող ոսպնյակ է այր Կամոյանի համար՝ վրձնող ներկայացնելու մեր նախնայաց փառահեղ կերպարները: Արվեստագետը հավատամբ ունի, որ պատմական գործիչների դիմագծերն ու բնավորության արտացոլիչները դաջված - անթելված են պատմիչների սողերի հետնախորքում, մեր լեռնաստանի բերդավերակներին ու լեռնապարերի վեհությունը: Եւ կամոյանական այդ գաղտնիքն է փարատում մեր կարողը՝ երկրպագելու Ձագ նահապետի, Վասակ Սյունի քաղաքագետի, Վահան Նախաշինողի եւ այլ մեծերի պատկերներին...

Համբուրում եմ աջը, քանքարաշատ այր, եւ մաղթում, որ յուրովսան ու անխամիր եռանդով համալրես քո մտորած՝ Սյունիքի վրձնական գրադարանը:

հանդեսի նկարներում հիմնականում նավատիներին եւ նրանց առօրյան եւ պատկերել, ցուցահանդեսի ողջ հավաքածուն թողել եմ իրենց: Լեւոնգրադում բացված ցուցահանդեսի նկարները նվիրել եմ ընկերների եւ մտերիմներին: Յուրմալայի ցուցահանդեսից ես ոչ մի նկար չբերեցի: Երկու ամսվա աշխատանքներս մնացին այնտեղ: Բացի այդ, Յուրմալայում մասնակցել եմ մրցույթի, մոտ 800 գեղանկարիչ էր մասնակցում, գրավել եմ առաջին տեղը: Ինքնագովություն չլինի, եթե իմ նկարներն իրար կողքի շարեւ, կհասնի երեւան: Դրան գումարած տասը հազար գծանկարներ:


Նրա վրձնած մի նկարում Անդրանիկ գորավարն է, Սմբատ Մելիք-Սպեփանյանը, Արամ դային

Այդ նկարով ուզել եմ ցույց տալ, որ Անդրանիկը եկել է Կապան: Այդ մասին մանրամասն նկարագրված է իսաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչը» գրքում, թե ինչպես գորավարը եկավ Պղնձի քաղաքը, հանդիպեց Սմբատ բեկին, զնացին Առաջածոր: Ձիով գալիս էին քաղաք, վերադառնում: Ես տեսել եմ այս քաղաքի հիմնադրումը, հինգ հազար բնակչություն ուներ, երեք բազմաբնակարան շենք կար՝ երկրորդ շենքը, քարի շենքը, ԻՏՍ-ի շենքը: Մարդիկ գյուղերից գալիս էին, հանքերում աշխատում եւ վերադառնում: Հետո գյուղաբնակները սկսեցին այստեղ տներ կառուցել, եւ բնակավայրը դարձավ քաղաք: Հիմա այդ ամենի հեռավոր հիշողություններն են մնացել: Այժմ շենքեր կան, մարդիկ կան, բայց քաղաք հասկացություն չկա, որովհետեւ դա ենթադրում է բնակիչների հավաքական միասնություն: Այդ միասնությունը

նր այն ժամանակ կար, ես դեռ փոքր էի: Ամբողջ ժողովուրդը մի մարմին էր, եւ բոլորը ձգտում էին մի լուսավոր նպատակի: Պատերազմ էր, հայրս կամավոր մեկնեց ռազմադաշտ, հազարավորները մեկնեցին: Պետք էր երկրին պղինձ տալ, ողջ բնակչությունը հանքերում էր աշխատում: Թերթն էլ կոչվում էր «Պղնձի համար»:

Կոչումների մասին

Ոչ մի կոչում չունեմ, Կապանում ո՞նց հնարավոր է, որ կոչում ստանամ: Ո՞վ իմ մասին գիտի, որ կոչման արժանացնեմ: Կապանում ո՞վ է հետաքրքրվում Կամոյանով: Ոչ մի բան չեմ ուզում, ինձ հանգիստ թողնեն, իմ գործով զբաղվեմ: Տեսնեմ կկարողանա՞մ ստեղծել իմ գլուխգործոցը, ասես կամաց-կամաց մոտենում եմ այդ նպատակին: Մի մարդու կյանքը շատ քիչ է մի գործով զբաղվելու եւ հիրավի գլուխգործոց ստեղծելու համար: Եթե յուրաքանչյուր գեղան-



Բարդուղիմեոս առաքյալը Սյունիքում, 2009թ., յուղ, կրավ:

կարիչ մի գլուխգործոց թողնի, նրա անունը ընդմիշտ կմնա:

Սաների մասին

Կիրակոսյա դպրոցում եմ դասավանդում, բայց մասնավոր ստուդիա ունեմ, որ գործում է 1972թ.: 107, թե՞ 108-րդ աշակերտին եմ պարապում, շատերն ընդունվել են բուհեր, սովորում են Մոսկվայում, Ստրասբուրգում, Նյու Յորքում, Երեւանում, Սանկտ Պետերբուրգում: Մեծերը կան շնորհալիներ, բայց դեռ երիտասարդ են, կայանալու, հաստատվելու ճանապարհ պիտի անցնեն: Ես չեմ սովորեցնում նրանց միայն նկարել, այլ աշխարհի հանդեպ վերաբերմունք եմ փորձում ձեւավորել, աշխարհը, տիեզերքը ու իրերը փիլիսոփայորեն ընկալելու կարողություն:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ



Վաչագան գյուղ, 2008թ., յուղ, կրավ:

Նկարիչը եւ ժամանակը

Ստորումներ գեղանկարիչ, քանդակագործ Ռոբերտ Կամոյանի հետ՝ 75-ամյակի առիթով



ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայացքը՝ խուսրուփի ամենաբարձր կապարին, ուրբերը՝ հողոտ, իր ներկայակալի խառնարանի՝ միայն իրեն հափուկ գույնով ու գծով ամեն օր մի նոր աշխարհի է ստեղծում: Ջրույցը Բարձրյալի հետ է՝ տիեզերական ու նաեւ շատ երկրային թեմաներով: Արվեստախոհում, որտեղ կայացավ մեր հանդիպումը, շատ բան չէր փոխվել: Պատերին կախված, այս ու այն կողմին հենած նոր գործերն են, ու ինքը՝ ցաք ու ցրիվ մորուսով, հյուրասեր ու փոքր-ինչ զարմացած, հարցականներով լի հայացքով, ջուր, պիրկ բազուկներով՝ պատրաստ ամեն պահ կյանք փալու մի նոր կրավի, ու մի միստիկ, օդից կախված զգացողություն, որի անունը նորին մեծությունն Ստեղծագործություն է:

– Ի՞նչ է ժամանակը նկարիչ-արվեստագետի համար:

– Նկարչի համար ժամանակը սկիզբ է առնում վաղ անցյալից, հասնում իրեն ու միտվում ապագային: Նկարիչն այն որսում է ու առնում շրջանակի մեջ: Ջուրն ասել է. «Նկարիչն իր ժամանակի խտացած խիղճն է»: Ոչ մի նկարիչ չի մտածում ստեղծել մի բան, որ կզարմացներ իր ժամանակակիցին: Նա շատ ավելի առաջ է նայում՝ տասնամյակներ, մուսուխի հազարամյակներ առաջ... Նա ուղղորդում է մեզ դեպի առաջ: Նկարիչն իր ժամանակի ճգնաժամն է: Ի վերուստ տրված շնորհով նա պիտի այրվի, մոխրամա ու դառնա գույն: Նրա շարժիչ ուժը սիրտն է: Միայն սիրտն է ուղղորդում նրան: Նրա հոգին ընդունիչ է, ալեհավաք: Նա, ով կարողանում է լսել ու տեսնել, ճիշտ ուղու վրա է: Նկարչի մարմինը կրակ է, ոչինչ չի կարող մարել այն: Հրե լեզվակներն այրում են շատ սրտեր, բայց ոչ բոլորին է տրված ականջալուր լինել նրա ռիթմին: Նկարիչը մեծ սեր պիտի ունենա առ հող, առ ժողովուրդ, առ իր թագավոր:

Կռիվը լույսի եւ խավարի միջեւ է: Հաղթում է տիեզերական ռիթմը, այն ստեղծում է տատանում, եւ դրանից ծնվում է տիեզերական երաժշտությունը: Լույսին ծառայողներ կան եւ տիեզերքում, եւ երկրին կառչած: Նկարիչը երկնային ու երկրային միասնության մեջ է: Ամենեւին կարելու չէ նրա հասցեականությունը: Ժամանակը նկարչի ուղեծիրն է, որով նա ընթանում է: Մեկ ստեղծագործության վրա նա կարող է տքնել երկար ժամանակ՝ մինչեւ ստանա կատարյալը, կամ անկատարը, բայց իր իղեալը:

– Որն է նկարիչ Կամոյանի փիլիսոփայությունը:

– Բոլոր արվեստների եւ երեւոյթների սինթեզն է: Մեկ աչքով անցյալին եւ մայրում, մյուսով՝ ապագային: Մեկ ոտքով հողի մեջ եւ, մեկով՝ տիեզերքում: Ձեռքիս մեկը սնվում է մայր հողից, մյուսը՝ մայր տիեզերքից: Նրանց միասնության մեջ է նշանակետը: Այդ անսահմանության մեջ պետք է կարողանա գտնել սկզբնակետը: Դա այն հիմնականն է, որը որպես սանկիք ի հայտ է գալիս, մնացյալը կառուցվում է նրա



Ռոբերտ Կամոյան, ինքնանկար, յուղ, կրավ:

շուրջը: Պետք է կարողանալ տարածության եւ ժամանակի մեջ գտնել կարեւորագույնը, մնայունը, իսկ դա մարդն է՝ բնության ամենակատարյալ ստեղծագործությունը, առանձնապես կինը՝ որպես բնության ամենամեծ առեղծվածը: Նկարիչը պետք է կարողանա բացել այդ տիեզերքը: Միակ փրկությունը տքնաջան աշխատանքն է, ազնիվ լինելը խղճի առջեւ: Այն նաեւ միակ փրկությունն է բոլոր դավերի դեմ՝ անգիտության, սոցիալության... եւ ոչ մի պարագայում կանգ չեն առնում... Երբեք, ոչ մի դեպքում: Նկարիչը շրջապատի համար ավելի շատ անհասկանալի է, մերկ, բայց իրականում նկարչի առաջ են, նկարչի առջեւ՝ մերկ: Նրան է տրված մարդուն տեսնելու, զգալու, նրա ներքնաշխարհը թափանցելու, վեհացնելու կամ ծաղրելու կարողությունը: Նա կարծես անտեսանելի հայելի լինի, որ տեսնում է անտեսանելի, իր հզոր էներգետիկան է թափանցում մարդու զգայական աշխարհի բոլոր ծալքերը: Իմ արվեստաճանաչում մնացել ենք դեմ դիմաց՝ եւ երկիր Հայաստան: Իմ Կոստան Ջարյանն ավելի մեծ է, քան Եսիլեսն ու Դանթեն, որովհետեւ իմ թիկունքին Քուչակն է,

Նարեկացին, Ֆրիկը, Մոմիկն ու Պիծակը...

Մեկ-մեկ արվեստաճանաչի պատուհանից նայելով աշխարհի անցուդարձին երկմտում եմ, բայց դա միայն մի պահ... Հաջորդ պահին անմիջապես հավատս ամրանում է: Չեմ կասկածում, առջետուն էլ ծնվում են ընտրյալներ:

– Ի՞նչ է պատգամում Կամոյան նկարիչը:

– Ես չեմ սովորեցնում իմ աշակերտներին նկարել, ինձ պետք են ճշմարտություն, սեր, հավատ առ Աստված: Բնության առեղծվածները պեղելը, նրանց հասկանալը, այս ամենն ընդհանրացնելով՝ ընդգծել, գտնել կարեւորագույնը: Այս բոլորը ենթարկելով բնության օրենքներին՝ տեղավորել շրջանակի մեջ... Նկարակալի մաքուր կտավին դու պիտի մոտենաս մաքուր մտքով ու խղճով, կեղծեցիր, նա քեզ կպատժի: Պատգամս ստեղծագործություններս են: Ողջ իմաստն ու խորհուրդը նրանց մեջ են, շարունակությունը՝ աշակերտներիս մեջ:

Կամոյանին գտնելու համար բավական է հայացքը կտրես նրա նկարներից, նայես իրականությանն ու նորից վերադառնաս նրա նկար-

ներին: Նրանք բաթախված են մաքրամաքուր, երկնային, տիեզերական անսահմանության ու հայրենի եզերքի մարդկանց առօրեական դյուցազնականությունում ու հերոսականությամբ, որոնք ծնունդ են տալիս գունային պատկերների հայտնությունը: Նա մեզ ուղղորդում է իր խառնվածքի ուժով՝ համադրելով ձեւավորված գեղագիտական մտքի եւ հստակ գիտելիքի հետ: Կամոյան նկարչի մեջ ամրապնդվեցին խոհականությունն ու հաստատականությունը, որոնց միաձուլվեցին նաեւ հասունությունն ու իմաստությունը: «Որքան հնարավոր է՝ հասցնել շատ տալ, այլ ոչ վերցնել: Հետք թողնելը կարեւոր է, առավել եւս՝ արվեստագետ-նկարիչի հետքը: Եթե ապագա սերունդների հիշողության մեջ մնա այդքան ստեղծագործություններից գոնե մեկը, ուրեմն նկարիչը կայացած է:

Իսկ մարդու ամենամեծ արժանիքը՝ կիսվելն է», – ասում է Ռոբերտ Կամոյանը:

Հ.Գ. Նկարիչ Կամոյանը պատրաստ է Կապան քաղաքին նվիրել իր՝ 150 եւ ավելի թվով ստեղծագործությունը:



Ռոբերտ Կամոյան, ինքնանկար, յուղ, կրավ:



Ռ.Կամոյանի կինը, 2000թ., յուղ, կրավ